Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
Ռեկտոր,
_____ Ն.Խ. Սաթիբեկյան

«21» 11 2020 թ.

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

№	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	էջ
1.	Առաջաբան	3
2.	Վարչական կազմ, ամբիոնի վարիչներ	4
3.	Ընդունելություն 2019	5
4.	Գիտական խորհրդի կազմը	6
5.	Գիտական խորհրդի գործունեությունը	7
6.	Որակի ապահովման և կրթության բարեփոխումներ	8
7.	Գիտական մաս	11
8.	Ֆակուլտետների գործունեություն	13
9.	Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին	24
10.	Ուսումնական մաս	27
11.	Մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավարի գործունեություն	32
12.	Արտաքին կապերի բաժին	34
13.	Գիտաբժշկական ուսումնական կենտրոն	39
14.	Ուսանողական խորհրդի գործունեություն	41
15.	Ուսանողական գիտական ընկերություն	42
16.	Գրադարան	33
17.	Տնտեսական մաս	45

1. ԱՌԱՋԱԲԱՆ

Ավանդական բժշկության համալսարանի ղեկավարությունը հաշվետու ժամանակաշրջանում առաջնորդվել է համալսարանի կանոնադրությամբ և գործող նոր ռազմավարական ծրագրով:

Համալսարանը հավատարիմ մնալով իր ավանդույթների պահպանմանը, զուգահեռ իրականացնում է հաջորդական ու համակարգված քայլեր, մասնավորապես՝ համընթաց զարգացնելով մատուցվող ծառայությունները բժշկական կրթության ուղղությամբ, ներդնելով և գործնականում կիրառելով դասավանդման նորագույն մեթոդներ և տեխնոլոգիաներ: Անընդհատ զարգացման, առաջընթացի, և ժամանակին համահունչ գործունեության արդյունքում համալսարանը պատվով է հաղթահարել հավատարմագրման գործընթացը, որի համատեքստում առանձնակի կարևորվել է բժշկական կրթության բարեփոխումը, համապատասխանեցնելով եվրոպական բարձրագույն մասնագիտական կրթական տարածքի չափանիշներին:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անխափան գործունեության համար պարբերաբար արդիականացվում են տեխնիկական միջոցները, լսարանները, լաբորատոր կաբինետները, որի կատարելագործման ուղղությամբ հետևողական աշխատանքը խթանում է դասախոսների մասնագիտական որակի անընդհատ բարձրացման մրցակցությունը:

Համալսարանում ստեղծված համակարգչային լայն ցանցը և ինտերնետային կապի հասանելիությունը ուսման որակի բարձրացման երաշխիքներից է, իսկ ուսանող-դասախոս կապն ապահովող տարբեր էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով, որը շարունակաբար կատարելագործվում է, իրականացվում է կրթական նյութերի հասանելիությունը:

Տարվա ընթացքում հետևողականորեն համակարգվել է օտարազգի ուսումնառողների համար կրթական ծրագրերի յուրաքանչյուր դասընթացի էլեկտրոնային տիրույթում դասախոսների և ուսանողների խմբերի ինտերակտիվ գործունեությունը, իրականացվել է ինչպես առկա, այնպես էլ էլեկտրոնային խորհրդատվության և էլեկտրոնային հանձնարարությունների տրամադրում և գնահատում, կախված առարկայական դասընթացների մասնագիտական առանձնահատկություններից:

Համալսարանը մեծապես ընդլայնել է միջազգային համագործակցության աշխարհագրությունը. գործակցային հուշագրերի, պայմանագրերի կնքումը

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

№	Անուն, Ազգանուն	Պաշտոն
1.	Սարիբեկյան Նորիկ	Ռեկտոր /ԿԳԹ
2.	Գյոզալյան Արայիկ	ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտոր
3.	Կարապետյան Անահիտ	Դեկան
4.	Հովսեփյան Ռոման	Գիտական մասի վարիչ/ԲԳԹ
5.	Սարգսյան Ասյա	Ուսումնական մասի վարիչ
6.	Հովսեփյան Մանուշակ	ՈԱ բաժնի առաջատար մասնագետ
7.	Սարգսյան Անի	Արտաքին կապերի բաժնի վարիչ
8.	Թարջումանյան Նվարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժ. վարիչ
9.	Ավոյան Սուսաննա	Գլխ. հաշվապահ
10.	Խնչումյան Սիմոն	Քաղ. պաշտպ. շտաբի պետ
11.	Սանասյան Գոհար	Դեկանի օգնական
12.	Կիրակոսյան Գոհար	Ուսումնական մասի վարիչի օգնական
13.	Դանիելյան Նաիրա	Ուսումնական մասի վարիչի օգնական
14.	Գաբրիելյան Վարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ
15.	Հարությունյան Լուսինե	Գանձապահ-հաշվապահ
16.	Ավետյան Աննա	Գրադարանավար

3. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉՆԵՐ

Ամբիոն	Անուն, Ազգանուն,Հայրանուն	Գիտական աստիճան, կոչում
Հումանիտար առարկաների	Կարապետյան Տաթևիկ	Բանաս. ԳԹ
Բնագիտական առարկաների	Ջավրուշյան Հայարփի	ԿԳԹ
Բժշկակենսաբանական առարկաների	Հունանյան Նաիրա	ԿԳԹ
Սոցիալական բժշկության	Սարգսյան Աննա	ԲԳԹ
Թերապևտիկ առարկաների /ժ/պ/	Արշամյան Արա	ԲԳԹ
Վիրաբուժական առարկաների	Մինասյան Արսեն	ԲԳԴ
Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	Մինասյան Էլեոնորա	ԲԳԹ
Ստոմատոլոգիայի	Հակոբյան Հովնան	ԲԳԹ

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 2019

Համալսարանում իրականացվում է միայն առկա ուսուցում: 2019 թվականի ընդունելությունը անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով իրականացվել է համաձայն լիցենզիայի սահմանված տեղերի թվաքանակի, մասնավորապես.

- «Բուժական գործ» մասնագիտությամբ - 99 ուսանող
- «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ – 11 ուսանող:

Ըստ տարիների համեմատական պատկերը.



Համեմատելով նախորդ տարիների ընդունելության տվյալների, հաշվետու տարում «Բուժական գործ» մասնագիտության դիմորդների թիվը ավելացել է, իսկ «Ստոմատոլոգիա» մասնագիտության դիմորդներինը նույն է, ինչ նախորդ տարում:

Ավանդական բժշկության համալսարանի անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով մասնագիտությունները.

Դասիչ	Ուսուցման ձևը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Որակավորում	Սահմանային տեղեր
091101.00.7	Առկա	6	Հայերեն և անգլերեն	բժիշկ	120
091201.00.7	Առկա	5	Հայերեն և անգլերեն	բժիշկ-ստոմատոլոգ	120

Հաշվետու տարվա ընթացքում ակնհայտ նկատվում է դիմորդների դինամիկական աճ, ինչը վկայում է, որ համալսարանը իրականացնում է արդյունավետ, նպատակային կառավարման քաղաքականություն և մատուցում է որակյալ բժշկական կրթական ծառայություն:

5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝	Կ.գ.թ., ռեկտոր Սարիբեկյան Ն.Խ.
Գիտական քարտուղար՝	Կ.գ.թ., գիտական մասի վարիչ, Հովսեփյան Ռ.Ա.
Գիտ. խորհրդի անդամներ՝	
Գյոզալյան Ա.Գ.	Մանկ.գ.թ., դոցենտ, Որակի ապահովման և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր
Կարապետյան Ա.Ն.	Դեկան
Սարգսյան Ա.Հ.	Ուսումնական մասի վարիչ
Սարգսյան Ա.Ա.	Արտաքին կապերի բաժնի վարիչ
Մինասյան Ա. Լ.	Բ.գ.դ., պրոֆեսոր, կրթական ծրագրերի ղեկավար, «Վիրաբուժական առարկաների» ամբիոնի վարիչ
Սիմոնյան Տ.Վ.	Բանաս.գիտ.թ., «Հումանիտար առարկաների» ամբիոնի վարիչի պաշտոնակատար
Ջավրուշյան Հ.Գ.	Կ.գ.թ., «Բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչ
Հունանյան Ն.Գ.	Կ.գ.թ., «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի վարիչ
Մինասյան Է. Մ.	Բ.գ.թ., «Է. Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնի վարիչ
Օվչյան Ա.Ա.	Հոգ.գ.թ., «Սոցիալական բժշկության» ամբիոնի վարիչ
Հակոբյան Հ.Հ	Բ.գ.թ., «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ
Վարդանյան Վ. Յ.	ԳԲՈՒԿ-ի գլխավոր բժիշկ
Թարջումանյան Ն.Վ.	ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ
Ավոյան Ս.Հ.	Գլխավոր հաշվապահ
Կուլիջանյան Հ.	ՈՒԽ նախագահ, ստոմ. մագիստր. 2-րդ կուրսի ուսանող
Նազարյան Օ.	ՈՒԳԸ նախագահ, ստոմ. ֆակ. մագիստ. 2-րդ կուրս ուսանող
Կարախանյան Ս.	Ստոմ. ֆակ. 5-րդ կուրս
Դուստդարարաբի Ֆ.	Ստոմ. ֆակ. 3-րդ կուրս

6. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի գիտական խորհուրդը համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական, գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող կոլեգիալ մարմին է:

Համալսարանի գիտական խորհուրդը 2019-2020 ուստարվա ընթացքում գումարել է 16 նիստ:

Հաշվի առնելով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակի տարածման դեպքերը և այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ, որպես պանդեմիա որակելու հանգամանքը, 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում գումարվել է գիտական խորհրդի 6 արտահերթ նիստ: Հրավիրված վեց արտահերթ նիստերի ընթացքում քննարկվել են արտակարգ դրության պայմաններում ուսումնական գործընթացի անխափան աշխատանքների կազմակերպչական հարցեր, մասնավորապես ուսումնական գործընթացի հեռավար (առցանց) կազմակերպման վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ ԱԲՀ-ի գիտական խորհուրդի կողմից.

- Հաստատվել է գիտական խորհրդի և ստորաբաժանումների 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանը:
- Հաստատվել են՝ կառավարման, գիտական խորհրդի, ռեկտորատի, ինչպես նաև հանձնաժողովների կազմեր:
- Քննարկվել և հաստատվել է համալսարանի ինստիտուցիոնալ հավատագրման փորձագիտական խմբի կողմից ներկայացված թերությունների վերացման պլան ժամանակացույցը:
- Քննարկվել և հաստատվել են կազմակերպչական, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման վերաբերյալ անհրաժեշտ իրավանորմատիվային փաստաթղթերի փաթեթներ:
- Հաստատվել են 2019-2020 ուստարվա գործող կրթական ծրագրերի ուսումնական պլանները:
- Քննարկվել են ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները:
- Լսվել են ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների և հանձնաժողովների ղեկավարների հաշվետվությունները:

- Հաստատվել է համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի մասնագիտությունների ընդունելության քննությունների արդյունքները:
- Գիտական խորհրդի նիստերում քննարկված հարցերի շուրջ կայացվել են համապատասխան որոշումներ:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հաշվի առնելով Համալսարանում կառուցվածքային փոփոխությունները հաշվետու տարում որակի ապահովման և կրթության բարեփոխումների գործունեությունը ամփոփվում է ՈԱ բաժնի աշխատանքային պլանով նախատեսված 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի գործողությունների և ԳԽ-ին կից ՈԱ հանձնաժողովի գործունեության համաձայն: ԳԽ-ին կից Որակի ապահովման հանձնաժողովի գործունեությունը ըստ պլանի նախատեսված աշխատանքների, հիմնականում իրականացվել է: Հանձնաժողովի աշխատանքներն ամբողջովին ամրագրված է համապատասխան արձանագրություններով:

2019-2020 ուստարում հանձնաժողովն իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

1. Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց:

2019թ. նոյեմբերի 13-ին ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի կողմից Համալսարանին է ներկայացվել ինստիտուցիոնալ հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը և նախնական եզրակացությունը՝ ըստ չափանիշների.

ՉԱՓԱՆԻՇ		ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1.	Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2.	Կառավարում և վերակազմակերպում	Չի բավարարում
3.	Մասնագիտության կրթական ծրագրեր	Չի բավարարում
4.	Ուսանողներ	Բավարարում է
5.	Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6.	Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7.	Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.	Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9.	Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10.	Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

ՈԱՀ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել են քննարկումներ ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների ղեկավարների և ուսանողների հետ:

ՈԱ առաջատար մասնագետ Մ.Հովսեփյանը նախնական զեկույցից առանձնացրել է ըստ Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության փաթեթի 10 չափանիշների, համալսարանի 9-ը ուժեղ և 16 թույլ կողմերը, որն էլ դարձավ ուսումնասիրության առաջնահերթություն:

Իրականացված աշխատանքների արդյունքում դեկտեմբերի 4-ին ՈԱՀ-ի կողմից ՈԱԱԿ Հիմնադրամ ներկայացվեց նախնական զեկույցի վերաբերյալ Ավանդական բժշկության համալսարանի դիտարկումները և անհամաձայնությունները, որից հետո ՈԱԱԿ տնօրեն Ռ.Թոփչյանի նախաձեռնությամբ ՈԱԱԿ-ում տեղի ունեցավ հանդիպում - քննարկում հանձնաժողովի և ԱԲՀ - ի ՈԱՀ-ի կազմի հետ:

2019թ. դեկտեմբերի 25-ին ԱԲՀ-ի ԳԽ-ին կից ՈԱՀ-ի կողմից մշակվեց Ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի կողմից ներկայացված թերությունների վերացման պլան-ժամանակացույցի նախագիծը, որը տրամադրվեց ԱԲՀ-ի ստորաբաժանումներին քննարկման և առաջարկությունների ներկայացման համար:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի կողմից առաջադրված թերությունների վերացման պլան-ժամանակացույցի նախագիծը, որտեղ ներառված էր ըստ թերությունների վերացման համապատասխան քայլեր, գործողություններ, պատասխանատուներ և վերջնարդյունքներ: Ամբողջական պլանը 10 չափանիշներով, վերջնական տարբերակը ներկայացվել է Համալսարանի ներքին շահակիցներին՝ ժամկետների հստակեցման նպատակով: Ներքին շահակիցների հետ ամփոփելուց հետո, այն ներկայացվել է ՈԱԱԿ հիմնադրամ:

2. ՈԱԱԿ-ի հետ համատեղ որակի ներքուհական ապահովման աշխատանքների կազմակերպում:

Ընթացիկ ուսումնական տարում ԱԲՀ-ն մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված 4 հանդիպում-քննարկումների, որոնք հիմնականում վերաբերվում էին արտակարգ դրության պայմաններում ուսումնական գործընթացի անխափան կազմակերպմանը: Հանդիպում-քննարկումների արդյունքում ԱԲՀ-ի ամբիոններին հանձնարարվել է ներկայացնել առաջարկություններ ուսումնական գործընթացի անխափան կազմակերպման, արդյունավետության և որակի ապահովման ուղղությամբ:

3. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակ

Հաշվի առնելով աշխարհում նոր կորոնավիրուսի համավարակը և 16.03.2020թ. ՀՀ

Համալսարանում իրականացվեց գործող պլանների վերանայում: Ըստ վերանայված գործողությունների ժամանակացույցի՝ ՈԱՀ-ի և Ուսումնական մասի նախաձեռնությամբ իրականացվել են առցանց հարցաթերթիկային հարցումներ՝ հեռավար ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատման նպատակով:

2020 թվականի մարտի 7-ին տեղի է ունեցել առցանց հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսուցման կազմակերպման վերաբերյալ հարցեր: ՈԱՀ-ի կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել համապատասխան ընթացակարգ, ամփոփիչ գիտելիքների ստուգման և ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացի կազմակերպման համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱՀ-ի կողմից պարբերաբար առցանց եղանակով կազմակերպվել են տարբեր հանդիպումներ, խորհրդատվություններ, սեմինարներ՝ արտակարգ դրության պայմաններում առաջացած խնդիրների լուծման նպատակով: Բոլոր հանդիպումները, քննարկումները, դասախոսների կողմից ներկայացված անձնական փորձի ներկայացումները մեծ հնարավորություն են տվել մասնակիցներին՝ համախմբվելու, երկխոսելու, միավորելու իրենց ներուժը, ճիշտ նախագծելու և արդյունավետ դարձնելու արտակարգ դրության պայմաններում ուսումնական գործընթացի անխափան և արդյունավետ կազմակերպումը:

4. ԱԲՀ-ի 2017-2022թթ.ՌՋՇ վերանայում:

Համաձայն ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի դիտարկումների վերանայվել է Համալսարանի գործող ՌՋՇ-ն: Վերանայման աշխատանքերը համատեղ իրականացվել է գործող ՌՋՇ պլանավորման հանձնաժողովի և ԳԽ-ին կից ՈԱՀ-ի կողմից:

Արդյունքում, վերանայվել է նաև ԱԲՀ-ի կառավարման կառուցվածքային համակարգը, մասնավորապես՝ ՈԱ բաժինը որպես առանձին կառույց լուծարվել է, ՈԱ համակարգի առավել արդյունավետ գործունեության համար ստեղծվել է ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի հաստիք: Կառավարման համակարգում ստեղծվել է նաև ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստիք:

Այսպիսով, նման կառուցվածքային փոփոխությունները հնարավորություն կնձեռեն առավել արդյունավետ իրականացնել նոր ՌՋՇ-ով սահմանված նպատակները և լուծել առաջադրված խնդիրները:

ԱԲՀ-ի կառավարման խորհրդի կողմից հաստատվել և շրջանառության մեջ է դրվել՝

2. ԱԲՀ հաստիքացուցակը:
3. ԱԲՀ-ի 2020-2025թթ. ամբողջովին արդիական, իրատեսական և չափելի գնահատման ցուցիչներով ՌԶԾ-ն:
4. Գլխավոր հաշվապահի 2019-ի տարեկան հաշվետվությունն ու 2020-2021թթ ֆինանսական ռեսուրսների պլանավորումն և բաշխումը:

8. ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

Համալսարանում հաշվետու ժամանակահատվածում ուսումնական գործընթացում ներգրավված են եղել 70 մասնագետներ, որոնցից 3-ը ունեն դոկտորի գիտական աստիճան, իսկ 36-ը՝ գիտությունների թեկնածուի աստիճան:

Համալսարանի դասախոսների մի մասը ուսումնական գործընթացին զուգահեռ զբաղվում է նաև մասնագիտական և գիտական գործունեությամբ:

Համալսարանում դասախոսող գիտամանկավարժական անձնակազմի կողմից հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է մեկ գիրք, մեկ գրքույկ և 51 հոդված, որոնցից 38-ը՝ արտերկրում (գծապատկերներ 1), 44-ը՝ գրախոսվող պարբերականներում: ԱԲՀ-ի դասախոսները իրենց գիտական ձեռքբերումների մասին զեկուցել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ միջազգային գիտաժողովներին: Համալսարանի դասախոսներից 9-ը մասնագիտական վերապատրաստում(ներ) են անցել, որոնցից 3-ը՝ արտերկրում:

Գծապատկեր № 1

ԱԲՀ-ի դասախոսների գիտական գործունեության ամփոփ պատկերը 2019-2020 թթ.:



Գծապատկեր № 2

ԱԲՀ-ի աշխատակիցների ՀՀ և արտերկրում ունեցած գիտական հրապարակումների հարաբերակցությունը 2019-2020 թթ.:

Գծապատկեր № 3

ԱԲՀ-ի աշխատակիցների ՀՀ և արտերկրում տեղի ունեցած գիտաժողովներում ելույթների հարաբերակցությունը 2019-2020 թթ.:



Համեմատելով նախորդ տարվա տվյալների հետ, հաշվետու տարում դասախոսական կազմի կողմից գիտահետազոտական հոդվածների, թեզերի և աշխատությունների հրատարակումների թիվը որոշակի ավելացել է: Իհարկե այս ամենին որոշ խթան է հանդիսացել ԱԲՀ-ի ղեկավարության կողմից սահմանված խրախուսման համակարգը: Այնուամենայնիվ, բուհում աշխատող յուրաքանչյուր դասախոս պարտավոր է իրականացնել նաև գիտամանկավարժական գործունեություն:

9. ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում Համալսարանում սովորել են հայազգի և օտարազգի ուսանողներ, դասավանդումն իրականացվել է հայերենով և անգլերենով:

2019-2020 ուսումնական տարում դեկանի աշխատանքները կազմակերպվել են աշխատանքային պլանին համահունչ:

1. Ի տարբերություն 2018-2019 ուսումնական տարվա, հաշվետու տարում ավելացել է համալսարանում օտարերկրյա սովորողների թվաքանակը, ինչպես նաև ընդլայնվել է համալսարանի ուսանողների աշխարհագրական շրջանակը: Այսպես, այս ուսումնական տարում համալսարանում սովորել են ուսանողներ Հնդկաստանից, Իրաքից, Իրանից Եվրոպայի տարբեր երկրներից, Հորդանանից:
2. Ցավալիորեն պետք է արձանագրենք, որ 2019-2020 ուստարում ևս կենտրոնացված միասնական ընդունելությամբ հայ ուսանողների ընդունելություն չի եղել: Հայ ուսանողներ ունենցել ենք միայն ստոմատոլոգիական ֆակուլտետի 5-րդ և մագիստրատուրայի ավարտական կուրսերում:
3. 2019-2020 ուսումնական տարվա տարեսկզբին բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների անընդհատ և ինտեգրացված, մագիստրոսի կրթական ծրագրերով սովորել են թվով 312, իսկ տարեվերջին՝ 304 ուսանող:

Աղյուսակ 1

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

2019-2020 ուս. Տարի

Բուժական ֆակուլտետ				Ստոմատոլոգիական ֆակուլտետ				Ընդամենը		
Կուրս	Տարե-սկիզբ	Տարե-վերջ	Շրջա նավ.	Կուրս	Տարե-սկիզբ	Տարե-վերջ	Շրջա-նավ.	Տարե-սկիզբ	Տարե-վերջ	Շրջանավ.
I	99	97		I	11	9		110	106	
II	73	67		II	10	10		83	77	
III	44	44		III	15	15		59	59	
IV	19	20		IV	10	10		29	30	
V	7	7		V	21	20	20	28	27	20
-	-	-	-	Մագ.II	9	9	9	9	9	9
Ընդամ.	242	235	-	Ընդամ.	70	69	29	318	308	29
Հայազգի ուսանողներ								*38*	*37*	23
Օտարազգի ուսանողներ								*280*	*271*	6

Նախորդ տարիների համեմատությամբ հաշվետու տարում արձանագրվել է ստոմատոլոգիական ֆակուլտետի առաջին կուրս ընդունված ուսանողների թվաքանակի նվազում:

4. 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում ուսանողների շարժն ունի հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 2

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺ

2019-2020 ուս.տարի

Ֆակուլտետ	Հեռացում	Ազատում	Տարկետում	Տեղափոխում ստոմ. ֆակ.	Տեղափոխում բուժ. ֆակ-ից	Վերականգ.	Ընդունում, այլ բուհից տեղաշ.
Բուժական	8	3	-	-	-	-	3
Ստոմատոլոգիական	2	2	-	-	-	-	4
Ընդամենը	10	5					7

1. 2019-2020 ուսումնական տարին բացառիկ էր և առանձնահատուկ .... Աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության՝ COVID-19 -ի վարակի տարածման կանխարգելման հետ կապված հայտարարվեց արտակարգ դրություն: Ստեղծված իրավիճակը, իրոք, մեծ մարտահրավեր էր նաև կրթական համակարգի համար: Ըստ որի, կրթական բնագավառն էլ հայտնվեց մի արտակարգ իրավիճակում, երբ ընդհատվել էր առկա կրթությունը, և պետք էր հնարավորության սահմաններում խնդրին շատ արագ լուծում տրվեր՝ ապահովելով յուրաքանչյուր ուսանողի կրթության շարունակականությունն այլընտրանքային մոտեցումներով:
2. 2019-2020 ուսումնական տարվա գարնանային կիսամյակի ողջ ուսումնական գործընթացը, ուսուցումը, ներառյալ նաև ամառային քննաշրջանը, իրականացվեցին հեռավար՝ օգտագործելով ժամանակակից տեղեկատվական առցանց ուսուցման տարատեսակ հարթակները և հավելվածները՝ Zoom, Moodl, Classrom և այլն: Հեռավար ուսուցման մեթոդը նոր մոտեցումներ էր պահանջում: Այդ կապակցությամբ իրականացվեցին կազմակերպչական որոշ աշխատանքներ, առաջնահերթ վերանայվեցին երկու ֆակուլտետների դասացուցակները, ըստ կուրսերի և ենթախմբերի կազմավորվեցին խմբեր տարբեր հարթակներում, որի մեջ ընդգրկվել են տվյալ խմբի դասախոսները, կուրսղեկները, ուսմասի վարիչը, արտաքին կապերի բաժնի վարիչը, դեկանը՝ ամենօրյա փոխադարձ կապի, նորություններին, հայտարարություններին, տեղեկություններին իրազեկվելու նպատակով և ուսումնական գործընթացի վերահսկողության համար:
3. Համալսարանի որոշ լսարաններ և կլինիկական բազաներ վերազինվեցին տեխնիկական նոր սարքավորումներով՝ առցանց ուսուցումը պատշաճ կազմակերպելու նպատակով: Ի պատիվ համալսարանի դասախոսների, առցանց ուսուցումն իրականացվեց բավականին կազմակերպված, առանց դժվարությունների, քանի որ համալսարանում այդ մեթոդը դասախոսներից ոմանք արդեն իսկ մինչ այդ, որպես լրացում լսարանային դասավանդմանը, այս կամ այն չափով կիրառել էին՝ օգտագործելով վերոնշյալ հարթակներն ու հավելվածները, և, բնականաբար, մեր ուսանողներն էլ քաջատեղյակ էին այդ մեթոդով աշխատելուն: Անհրաժեշտություն առաջացավ ընթացակարգով կարգավորել ուսանողների կիսամյակային ամփոփիչ գիտելիքների ստուգումների և գնահատումների (ստուգարքներ, քննություններ), ինչպես նաև շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և գիտելիքների գնահատման բողոքարկման հետ կապված

հաստատվեց «ԱԲՀ հեռավար ուսուցմամբ ուսումնառողների ամփոփիչ գիտելիքների ստուգման և գնահատման» ընթացակարգը, որով էլ առաջնորդվեցինք 2019-2020 ուստարվա ամառային քննաշրջանը կազմակերպելիս և անցկացնելիս:

4. 2019-2020 ուսումնական տարում կազմվել, ժամանակին պատրաստվել են երկու ֆակուլտետների ուսումնական տարվա ուսումնական օրացույցները, աշնանային և գարնանային կիսամյակների դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննաշրջանների, լուծարքների ժամանակացույցները:
5. 2019-2020 ուսումնական տարում աշնանային և գարնանային կիսամյակների ընթացքում կայացել են համալսարանի ամբիոնների նիստեր, որտեղ քննարկվել և վերլուծվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը տվյալ ամբիոնում, ուսանողների առաջադիմության արդյունքները, լուծարքների, պրակտիկաների արդյունքները, վերհանվել են որոշ խնդիրներ՝ կապված գնահատման համակարգի ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների բարելավման և այլ հարցերի հետ:
6. Դեկանի և կուրսերի խորհրդատուների կողմից հաշվետու տարում բազմիցս կազմակերպվել են անհատական հանդիպում-զրույցներ ցածր առաջադիմություն ունեցող, բացակայող ուսանողների հետ, բացատրությունների միջոցով տարվել են համապատասխան աշխատանքներ, ամբիոններում կազմակերպվել են առարկայական խորհրդատվություններ:
7. Կիսամյակների ընթացքում բոլոր կուրսերում, համապատասխան կուրսի խորհրդատուի, ուսումնական մասի վարիչի, ուսանողական խորհրդի նախագահի հետ միասին անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ֆակուլտետների կուրսերի առաջադիմությունը, հաճախումների վիճակը, ինչպես նաև կազմակերպչական հարցեր:
8. Հաշվետու շրջանում պատշաճ կերպով կազմակերպվել են ձմեռային և ամառային քննաշրջանները, լուծարքները և վերահսկվել են դրանց ընթացքը:
   - Կազմվել են 2019-2020 ուսումնական տարվա ձմեռային և ամառային քննաշրջանների ժամանակացույցները դրանք նախապես համաձայնեցնելով ուսանողների հետ:
   - 2019-2020 ուսումնական տարվա երկու քննաշրջանների ընթացքում կազմակերպվել են և անցկացվել 228 ստուգարք և 137 քննություն /աղյուսակ 3/:

Աղյուսակ 3

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐԻ

ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ

Ֆակուլտետ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան	
	Ստուգ.	Քննութ.	Ստուգ.	Քննութ.	Ստուգ.	Քննութ.
Բուժական	60	37	67	42	127	79
Ստոմատոլ.	46	30	55	28	101	58
Ընդամենը	106	67	122	70	228	137

- Քննաշրջաններից առաջ և հետո երկու ֆակուլտետների բոլոր կուրսերում կազմակերպվել են խորհրդակցություններ, որոնցում քննարկվել են քննաշրջանի հետ կապված հարցերը և ապա՝ վերլուծվել են տվյալ կուրսի քննաշրջանի արդյունքները, հատկապես բարձրացվել է ակադեմիական պարտքեր ունեցողների հարցը և նրանց տեղեկացվել լուծարքների անցկացման ժամանակացույցը:
- Քննություններից առաջ բոլոր քննական առարկաներից անցկացվել են խորհրդատվություններ:
- Փետրվար և սեպտեմբեր ամիսներին կազմակերպվել են ձմեռային և ամառային քննաշրջանների լուծարքների I և II փուլերը, որոնցից հետո ամփոփվել են ֆակուլտետների կիսամյակային և տարեկան ընդհանուր և որակական առաջադիմությունը /աղյուսակներ 4,5,6/:
- Բուժական ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 82,4%, իսկ որակականը՝ 56,8%:

Ձմեռային քննաշրջանում ակադեմիական պարտքերի քանակը կազմում է 385 /անբավարար՝ 325 և չներկայացած՝ 60/, որից լուծարքների ժամանակ մարվել են 319, չի մարվել 66-ը :

- ✓ Բուժական ֆակուլտետում ամառային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 92,88%, իսկ որակականը՝ 73,8%:
- ✓ Ակադեմիական պարտքերի քանակը կազմում է 256 /անբավարար՝ 142 և

- Համեմատաբար բարձր առաջադիմություն է գրանցվել 3-րդ, 4-րդ, 5-րդ կուրսերում: Բուժական ֆակուլտետում տարեկան ընդհանուր առաջադիմությունը կազմում է 87,6 % , իսկ որակականը՝ 65,3 %:

Աղյուսակ 4

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Կուրս	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան առաջադիմություն	
	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%
101	*82,4*	*46,8*	*81,6*	*64*	*82*	*55,4*
102	*90*	*62,8*	*87,2*	*66*	*88,6*	*64,4*
103	*81,7*	*46,3*	*95,3*	*64,87*	*88,5*	*55,6*
104	*86*	*58*	*80*	*61*	*83*	*59,5*
I	85,0	53,5	86	64,0	85,5	58,75
201	*83,6*	*49,65*	*91*	*67,3*	*87,3*	*58,5*
202	*70*	*36,7*	*83,3*	*56,25*	*76,65*	*46,5*
203	*76,6*	*35,3*	*85,4*	*52,86*	*81*	*44*
204	*80*	*49,5*	*82,7*	*63*	*81,35*	*56,25*
II	77,55	42,8	85,6	60,0	81,575	51,4
301	*80,3*	*46*	*90*	*71,25*	*85,15*	*58,6*
302	*78,6*	*55,7*	*98,4*	*81,3*	*88,5*	*68,5*
III	79,45	50,85	94,2	76,3	86,825	63,575
IV	95,4	68,4	100	80	97,7	74,2
V	74,3	68,5	98,6	88,63	86,45	78,565
Ընդամենը	***82,36***	***56,84***	***92,88***	***73,8***	***87,62***	***65,32***

- Ստոմատոլոգիական ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 89,4%, իսկ որակականը՝ 60,0%: Ձմեռային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը կազմում է 101 /անբավարար 79 և չներկայացած 22/, որից լուծարքների ժամանակ մարվել են 81-ը, չի մարվել 20-ը:

- Ամառային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 94,0 %, իսկ որակականը՝ 67,2 %:
- Ամառային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը կազմում է 42 /անբավարար 27 և չներկայացած 15/, որից լուծարքների ժամանակ մարվել են 23, չեն մասնակցել 19-ը:
- Ստոմատոլոգիական ֆակուլտետում համեմատաբար բարձր առաջադիմություն է գրանցվել անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 4-րդ, 5-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերում:
- Ստոմատոլոգիական ֆակուլտետում տարեկան ընդհանուր առաջադիմությունը կազմում է 91,7%, իսկ որակականը՝ 63,6% :

Աղյուսակ 5

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐԻ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Կուրս	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան Առաջադիմություն	
	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%
I	94	62	91	68,2	92,5	65,1
II	83	54	82	62	82,5	58
III	88,7	55,3	92,8	66	90,75	60,65
IV	95,5	77,7	99,25	78	97,375	77,85
502	*88.4*	*66.6*	*100*	*95.8*	*94.2*	*81.2*
503	*79.5*	*24*	*100*	*32.13*	*89,75*	*28*
V	83,95	45,3	100	64	92	54,65
II մագ.	91	64,4	100	65	95,5	64,7
Ընդամենը	***89,4***	***60,0***	***94***	***67,2***	***91,7***	***63,6***

Երկու ֆակուլտետների քննաշրջանների առաջադիմության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ պետք է բարելավել որոշ դասընթացների՝ «Մարդու

անատոմիա», «Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն», «Նորմալ ֆիզիոլոգիա» դասավանդման դրվածքը:

Ստոմատոլոգիական և բուժական ֆակուլտետների տարեկան ընդհանուր առաջադիմությունը կազմում է 89.7%, իսկ որակականը՝ 64,5%:

Աղյուսակ 6

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐԻ ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Ֆակուլտետ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան առաջադիմություն	
	Ընդհ. առաջ. %	Որակ. առաջ.%	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%
Բուժական	*82,36*	*56,84*	92,88	73,8	87,62	65,32
Ստոմատոլ.	*89,4*	*60*	94	67,2	91,7	63,6
Ընդամենը	*86,0*	*58,4*	93,44	70,5	89,7	64,5

2019-2020 ուսումնական տարում գերազանց և բարձր առաջադիմություն են ցուցաբերել ներքոհիշյալ ուսանողները՝

բուժական ֆակուլտետ՝

- 1-ին կուրս - Տուրա Ասիֆուր Ռեհման Շահին, Լիյա Էլզա Ջոն,Սանա Ֆաթիմա Ավան:
- 2-րդ կուրս - Ստեֆեն Ջոզեֆ Ուալշ, Կարվան Համզա, Շերիա Անն Դանիել, Անիտտա Իգնատիուս, Սոնու Թոմաս, Ռոհինի Պրաբհակար Ջաղբուկե, Դիվյա Ռադհակրիշնա Փիլլաիին, Աշիշ Գանեշ, Պուջա Պրակաշ Վալ:
- 3-րդ կուրս - Ջիյաղ Տարիք Ջալալ, Ջասմին Ջոզեֆ, Սանիա Ջեքսոն:
- 4-րդ կուրս - Շաղ Շվան, Ռանիան Ռզգար, Մոհամմեդ Դլշաղ Համա:

ստոմատոլոգիական ֆակուլտետ՝

- 1-ին կուրս - Ռուպեկա Սիվակումար:
- 3-րդ կուրս - Ֆատեմեհ Դոստդարարարի, Սարմաղ Տարիք Ջամալ:
- 4-րդ կուրս - Մարյամ Աբբաս:
- 5-րդ կուրս - Սառա Աբդուլվահհաբ Ալի, Դեբար Նաջդաթ Ֆաթիհ:
- Մագիստրատուրա 2-րդ կուրս - Կուլիջանյան Հայկ, Նազարյան Օֆելյա:

➢ Տարվա ընթացքում բացարձակ գերազանց առաջադիմություն են ցուցաբերել՝

Բուժական ֆակուլտետ՝

- Լիյա Էլզա Ջոն /1-ին կուրս/.
- Ստեֆեն Ջոզեֆ Ուալշ, Աշիշ Գանեշ, Դուջա Պրակաշ Վաղ /2-րդ կուրս/:

Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝

- Ֆատեմեհ Դոստդարարաբի, Սարմադ Տարիք Ջամալ /3- րդ կուրս /:
- Մարյամ Աբբաս /4 -րդ կուրս/:
- Կուլիջանյան Հայկ, Նազարյան Օֆելյա /Մագիստրատուրա 2-րդ կուրս/:

9. 2019-2020 ուսումնական տարում համալսարանի «Բուժական գործ» մասնագիտությամբ շրջանավարտներ չենք ունեցել:

Կազմակերպվել են «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորումները:

✓ «Ստոմատոլոգիա» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման արդյունքները ներկայացված են աղյուսակներ 7, 8, 9-ում:

Աղյուսակ 7

2019-2020 ուս.տարի

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ /ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ /

N	Առարկա	Ընդհ. առաջ.% 502/503	Որակ. առաջ.% 502/503
1.	Թերապևտիկ ստոմ.և մանկ.թեր.ստոմ.	100/100	100/42,8
2.	Վիրաբուժական ստոմ. և մանկ.վիր.ստոմ.	100/100	100/21,4
3.	Օրթոպեդիկ ստոմ. և օրթոդոնտիա	100/100	100/28,6
Ընդամենը		100/100 100	100/31 65,5

Աղյուսակ 8

2019-2020 ուս.տարի

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ/

N	Առարկա	Ընդհ.առաջ.%	Որակ.առաջ.%
1.	Թերապևտիկ ստոմ.և մանկ.թեր.ստոմ.	100	55,5
2.	Վիրաբուժական ստոմ. և մանկ.վիր.ստոմ.	100	55,5
3.	Օրթոպեդիկ ստոմ. և օրթոդոնտիա	100	66,6
Ընդամենը		100	59,2

Աղյուսակ 9

2019-2020 ուս.տարի

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

N	Ֆակուլտետ	Ընդհ.առաջ.%	Որակ.առաջ.%
1.	Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիր	100	65,5
2.	Մագիստրատուրա	100	59,2
Ընդամենը		100	62,3

2019-2020 ուս. տարում համալսարանն ունեցել է շուրջ 29 շրջանավարտ՝

- «Ստոմատոլոգիա» մասնագիտություն՝
  - ✓ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով՝ 20 շրջանավարտ,
  - ✓ մագիստրատուրա՝ 9 շրջանավարտ, որից 2-ը ստացել են գերազանցության դիպլոմ /Հայկ Կուլիջանյան, Օֆելյա Նազարյան/:

Ամփոփելով ամփոփիչ ատեստավորման առաջադիմության արդյունքներն արձանագրեցինք, որ ընդհանուր առմամբ ուսանողները ցուցաբերել են լավ գիտելիքներ, «անբավարար» գնահատական ստացող չի եղել, հանձնաժողովները գոհ էին ուսանողների գիտելիքներից:

Մասնագետների պատրաստման որակը բարելավելու ուղղությամբ հանձնաժողովների նախագահները արեցին արժեքավոր առաջարկություններ, որոնք հաշվի կառնվեն հետագա աշխատանքներում:

10. Հաշվետու տարում գիտխորհրդին են ներկայացվել ձմեռային և ամառային քննաշրջանների հետ կապված առաջադիմության և լուծարքների արդյունքները:
11. Երկու ֆակուլտետների 2019-2020 ուս.տարվա ուսումնական պլանով նախատեսված ամառային ուսումնաարտադրական պրակտիկան, ելնելով արտակարգ դրությունից /պայմանավորված նոր կորոնավիրուսով՝ covid-19/, ռեկտորատով որոշվեց անցկացնել 2020-2021ուս.տարվա ընթացքում՝ հերթապահությունների ձևով:
12. 2019-2020 ուսումնական տարվա աշնանային և գարնանային կիսամյակներում ուսումը շարունակելու նպատակով համալսարան են ընդունվել այլ բուհերում ուսանած թվով 7 ուսանողներ, որոնցից՝
    - Բուժական ֆակուլտետ՝ 3,
    - Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 4:

    Նոր ընդունված ուսանողների համար կազմվել է տարբերությունների հանձնման գրաֆիկ, կազմակերպվել են խորհրդատվություններ, և, համաձայն ժամանակացույցի, ուսանողները հանձնել են այդ տարբերությունները:
13. Համալսարանի դասախոսների համար կազմակերպվել են խորհրդակցություններ՝ կապված հեռավար ուսուցման հետ:
14. Մասնակցություն է ցուցաբերվել համալսարանի Կառավարման խորհրդի, Գիտխորհրդի, Ռեկտորատի նիստերին և այլ հանձնաժողովների աշխատանքներին, որում ընդգրկված ենք և համալսարանում կազմակերպված այլ միջոցառումներին:
15. Մասնակցություն է ցուցաբերվել համալսարանի գիտխորհրդին կից որակի ապահովման հանձնաժողովի աշխատանքներին, ինչպես նաև համալսարանում գործող կարգերի և կանոնակարգերի վերանայմանն ու նոր կարգերի ստեղծմանը:
    - ✓ Ակադեմիական շարժունության կարգ,
    - ✓ Օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգման կարգ,
    - ✓ Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ,
    - ✓ Ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման կարգ,
    - ✓ Առարկայական դասընթացի ուսումնական ծրագիր կազմելու կարգ,
    - ✓ Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի գնահատման ընթացակարգ,

- ✓ Հեռավար ուսուցմամբ ուսումնառողների ամփոփիչ գիտելիքներին ստուգման և գնահատման ընթացակարգ,
- ✓ Վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման կարգ,
- ✓ Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ,
- ✓ ԱԲՀ Հեռավար դասընթացների արդյունավետության վերաբերյալ հարցաթերթ և այլն:

18. Կատարվել են դասալսումներ համալսարանի ամբիոնների որոշ դասախոսների մոտ:
19. Համագործակցություն է եղել համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ:

Եզրակացություններ, առաջարկներ

- Ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ լիցենզիայի շրջանակներում ապահովելով համալսարանի ատամաբուժական ֆակուլտետի դիմորդների կայուն հոսք և թվաքանակ:
- Բարելավել համալսարանի ընդունելության պլանավորումը՝ անպայման ներգրավելով հայ ուսանողներին և ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ, դիմորդների կայուն հոսքի և ուսանողների համակազմի պահպանման համար:
- Հեռավար ուսուցման հետ կապված անհրաժեշտ է մշակել՝
  - հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման կարգ,
  - դասախոսների համար հեռավար ուսուցման մեթոդական ուղեցույց:
- Վերանայել ուսանողների խրախուսման և ուսման վճարի զեղչերի տրամադրման կանոնակարգը:
- Համալրել համալսարանի գրադարանը անգլերեն գրականությամբ:
- Ամբիոններում աշխատանքներ տանել դասընթացների ամբիոնական հայերեն և անգլերեն մշակումների ընթացքի վրա և դրանցով համալրել գրադարանը:
- Ուսանողների մոտ գործնական հմտություններն ու կարողությունները բարելավելու նպատակով գործնական պարապմունքների ժամանակ ավելացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքը ֆանտոմների վրա:

10. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Համալսարանի ղեկավարությունը համաձայն իր առաքելության, սկզբունքներին և ռազմավարական զարգացման ծրագրի նպատակներին իրականացնում է թիրախային և

նպատակային անձնակազմի կառավարման քաղաքականություն, որի ապացույցն է հաշվետու՝ 2019-2020 ուստարվա ժամանակահատվածում անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը (գծապատկեր 1, 2):

Գծապատկեր № 1

Պրոֆեսորադասախոսական կազմի համեմատական տվյալներ

Համալսարանում ընդհանուր պրոֆեսորադասախոսական կազմից (70) 45-ը կին դասախոսներ են: Ի տարբերություն նախորդ տարվա, հաշվետու տարում դասախոսական կազմը համալրվել է 7 ով, իսկ ընդհանուր գիտական ներուժի համալրումը հետևյալն է՝ 2 պրոֆեսոր, 1 դոցենտ և 11 գիտությունների թեկնածու: Այսինքն, համալսարանի ղեկավարության կողմից իրականացվող դասախոսական անձնակազմի կառավարման քաղաքականությունը ակնհայտ կարելի է գնահատել դրական:

Գծապատկեր № 2

Համալսարանի վարչական անձնակազմը

Հաշվետու տարում վարչական անձնակազմում էական փոփոխություններ չի կատարվել: Ուսումնաօժանդակ կազմի փոփոխությունը կապված է հիմնականում աշխատողներին նոր պաշտոնների տեղակալմամբ, համաձայն ԱԲՀ-ի նոր կառուցվածքի համապատասխան հաստատված պաշտոնի անձնագրի: Համալսարանի վարչական անձնակազմի 16-ից 12-ի կին են:

ՄՈԿ և ընդհանուր բաժնի կողմից 2019-2020 ուստարվա ընթացքում կնքել է 76 աշխատանքային պայմանագիր: Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 20-ը /պայմանագրի լուծմամբ, որից 5-ը հիմնական աշխատող, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 57-ը:

- 2019-2020 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է ռեկտորի հրաման:
- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման.
  - պրոֆեսորադասախոսական կազմ՝ 42 աշխատանքային օր,
  - ռեկտոր, դեկան, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ՝ 30 աշխատանքային օր,
  - ԳԲՈՒԿ-ի աշխատակիցներ՝ 26 աշխատանքային օր,
  - վարչական , ուսումնաօժանդակ և տնտեսական մասին՝ 24 աշխատանքային օր:
- Հաստիքացուցակը կազմվել է 31.08.2019թ-ին, 08.01.2020թ-ին, և հաստատվել ռեկտորատի նիստում:
- Համալսարանում աշխատում են տարիքային 13 թոշակառուներ:

  Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:

  Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:

  2019-2020 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 476-ը:

- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:

  Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:

  Կատարվել է դիմումների և գանգատների հաշվառում:
- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:

Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 131 տեղեկանք /աշխատողներին՝ 41, ուսանողներին՝ 90/, բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

2019-2020 ուստարում համալսարանի ուսումնական մասն իրականացրել է ԱԲՀ-ում գործող կրթական ծրագրերին ու պլաններին համապատասխան գործընթացներ՝ առկա և հեռավար ձևով:

- Ուսումնական գործընթացը լիարժեք իրականացնելու համար ժամանակին պատրաստվել են ուսանողների ցուցակները, ուսումնական մատյանները, դասաբաշխման, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը, օրացույցային-թեմատիկ պլանների, խորհրդատվությունների մատյանի և այլ ձևաթղթերը:
- 2019-2020 ուստարում կազմվել և ժամանակին պատրաստ են եղել երկու ֆակուլտետների ուսումնական տարվա ուսումնական օրացույցները, դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննությունների, լուծարքների և աշնանային կիսամյակի պրակտիկայի ժամանակացույցները:
- 2019-2020 ուստարում վարձակալվել են նոր կլինիկաներ՝ «Նաիրի» ԲԿ և «Աբովյանի» ԲԿ,
- Բոլոր վարձակալած կլինիկական բազաները պատրաստ են եղել ընդունելու ուսանողներին:
- Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է փոփոխություններ «ԱԲՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման», «ԱԲՀ օտարերկրյա

դիմորդների գիտելիքների ստուգման», «ԱԲՀ սովորողների շարժունության», «ԱԲՀ ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման» կարգերում:

- Կիսամյակների սկզբում ճշտվել են բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, կազմվել են ուսումնական խմբերը, ըստ որի ունեցել ենք 19 խումբ, որից 2-ը հայազգի և 17-ը օտարազգիների՝

Բուժական ֆակուլտետ

- ✓ I , II , III, IV, V կուրսեր՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով - 12 խումբ:

Ստոմատոլոգիական ֆակուլտետ

- ✓ I , II, III , IV, V կուրսեր՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով սովորողներ - 6 խումբ:
- ✓ II կուրս՝ մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող - 1 խումբ:

Ցածր առաջադիմության և վատ հաճախումների պատճառով համալսարանից հեռացվել են 10 ուսանող, ազատվել են ուսանողական իրավունքներից համաձայն իրենց դիմումի 7 ուսանող:

2019-2020 ուսումնական տարում համալսարանն ունեցել է 7 ուսանողի ներհոսք՝ 3 ուսանող բուժական ֆակուլտետ, 4՝ ստոմատոլոգիական:

Աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում Նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման հանգամանքից ելնելով, ՀՀ կառավարությունը 16.03.2020թ-ի N 298-Ն որոշմամբ հայտարարել էր արտակարգ դրություն: Համալսարանը ընդհատում է առկա կրթությունը և շատ արագ ապահովում յուրաքանչյուր ուսանողի կրթության շարունակականությունը՝ հեռավար ուսուցմամբ: Հենց սկզբից դեկանատի և ուսումնական մասի կողմից կազմակերպվեցին առցանց հանդիպումներ ուսանողների, սմբիոնի վարիչների և դասախոսների հետ՝ հստակեցնելու առաջիկա անելիքները, որոշելու առցանցով ինչ ծրագրերով է իրականացնելու հեռավար ուսուցումը, միաժամանակ դասախոսական կազմին և ուսանողներին հասանելի դարձնելու առցանց ծրագրերը, ուղեցույցները, որոնք ներկայացնում են, թե ինչպես կարելի է ուսուցումն իրականացնել առցանց ծրագրերի միջոցով, ինչպես նաև ով ինչ խնդիր ունի հեռավար ուսուցման հետ կապված՝ համացանցի, կապի, տեխնիկական և այլն: Հիմնականում նույն դասացուցակն է, որը հաստատվել էր կիսամյակի սկզբում, միայն փոփոխվել են դասավանդման ժամերը՝ ելնելով առավոտյան ժամերին մեր կլինիցիստ-դասախոսների ծանրաբեռնվածությունից՝ համավարակի այս իրավիճակի հետ կապված: Հեռավար

ուսուցման ժամանակ հիմնականում ձևավորվում են իմացության հետ կապված վերջարդյունքները /գիտելիքները/: Գործնական հմտությունների /կարողություններ և տիրապետում/ ձևավորումը հեռավար ուսումնառության մեթոդներով ոչ լիարժեք է, նամանավանդ կլինիկական առարկաների համար: Խնդիրներ ունեցել ենք միայն «Ինֆեկցիոն հիվանդություններ» /բուժական 4-րդ կուրս/ առարկայի հետ, որի դասախոս Անահիտ Մկրտչյանը նաև գործող բժիշկ է և աշխատում է «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում, հիվանդների թվի աճով պայմանավորված շատ խիստ ծանրաբեռնվածություն ուներ, որի հետևանքով ընդհատել էր պարապմունքները: Ուստի, նկատի ունենալով, այն հանգամանքը, որ առարկան շարունակական էր 5-րդ կուրսում, 2019-2020 ուստարվա բուժական ֆակուլտետի 4-րդ կուրսի գարնանային կիսամյակի «Ինֆեկցիոն հիվանդություններ» առարկայի չպարարապած ժամերը տեղափոխվեց 2020-2021 ուստարվա հինգերորդ կուրսի աշնանային կիսամյակ:

Հեռավար ուսուցման ընթացքում ամենատարբեր հարցերով ամենօրյա կապ կար ուսանողների և դասախոսների հետ:

Ամեն ամսվա ավարտին դասախոսները ներկայացնում էին կատարողականներ դասերը վարելու մասին, ներկայացնում էին նաև վարած դասերի տեսանյութերը, սկրինշոտերը, որոնք պահպանվում են համալսարանում:

- Դեկանի, կուրսղեկների, ուսիտորիրդի հետ միասին կազմակերպել ենք և անցկացրել խորհրդակցություններ բոլոր կուրսերում՝ կապված ուսումնական գործընթացների հետ: Կազմակերպվել են նաև խորհրդակցություն ավարտական կուրսերի ուսանողների հետ: Ուսանողներին մանրամասն ներկայացվել է ավարտական ամփոփիչ ատեստավորումների անցկացման ընթացքը, <<ԱԲՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումների անցկացման>> կարգը:
- Կազմակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց հավելվածների տպագրման աշխատանքները և շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը: Հաշվետու տարում բուհն ավարտել են՝
  - ✓ «Ստոմատոլոգիա» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրով՝ 9 շրջանավարտ,
  - ✓ «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով՝ 20 շրջանավարտ:

Բացարձակ գերազանցությամբ բուհն ավարտել են 2 շրջանավարտ:

Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:

- Երկու կիսամյակների ընթացքում ուսանողները հանձնել են 228 ստուգարք և 137 քննություն:

Տայվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմում 89,35% , որը 2% նվազել է 2018-2019 համեմատ, իսկ որակական առաջադիմությունը աճել է 8%-ով : Ընդհանուր առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Հումանիտար առարկաների» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում:

Աղյուսակ 1

N	Ամբիոն	Աշնանային կիսամյակ		Գարնանային կիսամյակ		Տարեկան առաջ.	
		Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.
1	Հումանիտար առարկաների	96,6	59,8	96,7	73,35	96,65	66,6
2	Բնագիտական առարկաների	81,8	36,8	86,9	51,6	84,35	44,2
3	Բժշկակենսաբանական առարկաների	70,9	45,8	75,6	50,4	73,3	48,1
4	Սոցիալական բժշկության	81,33	58,2	100	92,01	90,7	75,1
5	Թերապևտիկ առարկաների	91,4	66	94	79	92,7	72,5
6	Վիրաբուժական առարկաների	94,4	73,3	97,8	78,8	96,1	76
7	Է. Մինասյանի անվան Ավանդական բժշկության	71,4	51	100	67,4	85,7	59,2
8	Ստոմատոլոգիայի	90,9	61,6	99,7	70,2	95,3	65,9
ԸՆԴԱՄԵՆԸ		*84,8*	*56,56*	*93,8*	*70,345*	*89,35*	*63,45*

Կարգավորվել և վերահսկվել են համալսարանի ամբիոնների ուսումնական պարապմունքներն ու գործունեությունը:

Հաշվետու տարում կազմակերպվել և կատարվել է պրակտիկայի անցկացումը միայն աշնանային կիսամյակի ստոմատոլոգիական ֆակուլտետի 5-րդ կուրսում /«Մանկական

Դենթիստ ատոմ. կլինիկայում՝ հերթապահությունների ձևով: Ելնելով երկրի արտակարգ դրությունից, պանդեմիայի պայմաններում անհնար էր անցկացնել գարնանային կիսամյակի ուսումնաարտադրական պրակտիկաները, ուստի համաձայն ռեկտորի 04.05.2020թ. թիվ 400 հրամանի, բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկաները տեղափոխվել են 2020-2021 ուսումնական տարի:

- 2019-2020 ուսումնական տարում բոլոր 8 ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 30 947 ժամ, որը 5 532 ժամով ավել է 2019-2020 ուս.տարվանից:

Կազմակերպել և ստուգել ենք 2019-2020 ուստարվա համալսարանի 8 ամբիոնների տարեկան դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունների հաշվարկները:

Ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարողականի ցուցանիշները

Հ/հ	Ամբիոն	Պլան	Կատարողական	Շեղում
1.	Հումանիտար առարկաների	2738	2589	-149
2.	Բնագիտական առարկաների	3190	3063	-127
3.	Բժշկակենսաբանական առարկաների	5890	5381	-509
4.	Թերապևտիկ առարկաների	2767	2304	-463
5.	Վիրաբուժական առարկաների	2147	1921	-226
6.	Սոցիալական բժշկության	1221	966	-255
7.	Ստոմատոլոգիայի	4348	4021	-327
8.	Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	1031	974	-57
Ընդամենը		23 332	21 219	-2 113

2019-2020 ուսումնական տարում 8 ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունը ըստ պլանի կազմել է 23 332, բայց կատարվել է 21 219 ժամ: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում չի կատարվել 2 113 ժամ բեռնվածություն:

Պարզ երևում է նաև, որ առավել մեծ է եղել ուսումնական ծանրաբեռնվածությունը Ստոմատոլոգիայի (4348 ժամ) և Բժշկակենսաբանական առարկաների (5890 ժամ)

ամբիոններում, իսկ փոքր՝ Է.Միհրսյանի անվան Ավանդական բժշկության (1031 ժամ), ամբիոնում:

Ըստ ուսումնական պլանի նախատեսված դասախոսների ծանրաբեռնվածության ժամաքանակի շեղումները պայմանավորված են հետևյալ պատճառներով.

- տոնական և ոչ աշխատանքային օրերի առկայություն,
- խորհրդատվություններին հատկացված ոչ բոլոր ժամերի կատարում,
- COVID-19 համավարակի հետ կապված համալսարանի վարձակալած կլինիկական բազաների վերապրոֆիլավորման պատճառով կլինիկական առարկաների դասախոսների գերծանրաբեռնվածություն:

➢ Կատարվել է հեռավար մասնակցություն ամբիոնների նիստերում, ռեկտորատի, գիտ. խորհրդի նիստերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կլինիկական առարկաների գործնական պարապմունքները ավելի լիարժեք կատարելու համար պանդեմիայի պայմաններում ամբիոները պետք է վերանայեն գործնական պարապմունքների վարման մեթոդիկան:
- Համալրել ամբիոնները գիտական աստիճան ունեցող մասնագետներով, նաև կարևորել դասախոսների վերապատրաստման հարցը:
- Համալրել համալսարանի գրադարանը անգլերեն գրականությամբ:

12. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում Ավանդական Բժշկության համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավարի գործունեությունը հիմնականում իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական աշխատանքային խմբի կողմից ներկայացված դիտարկումների և առաջարկությունների շուրջ, մասնավորապես գործող ՄԿԾ-ի վերանայման ուղղությամբ:

Ընդունելով ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական աշխատանքային խմբի առաջարկությունները, ՄԿԾ-ի ղեկավարի և ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի նախաձեռնությամբ աշխատանքներ են ձեռնարկվել ԱԲՀ-ի անընդհատ և ինտեգրացված մասնագիտական կրթական ծրագրերը ներկայացնել

Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի» և «Վիտեբսկի» բժշկական համալսարանների ղեկավարների հետ, որի արդյունքում ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն՝ վերոհիշյալ աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

2019թ. նոյեմբեր ամսին Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարանին» ուղարկվել է անընդհատ և ինտեգրացված «Բուժական գործ» ՄԿԾ-ն, իսկ «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանին» անընդհատ և ինտեգրացված «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ն:

Բելառուս գործընկերների կողմից սեղմ ժամկետներում (երկու ամիս) Համալսարանին են ներկայացրել երկու ՄԿԾ-ի արտաքին գնահատման եզրակացությունները:

Համաձայն ԲՀ «Գրոդնոյի» և «Վիտեբսկի» պետական բժշկական համալսարանների կողմից ներկայացված եզրակացությունների՝ 03.02.2020թ. ձևավորվել է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների անընդհատ և ինտեգրացված մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման նոր աշխատանքային խումբ, որը 2020թ. փետրվարի 10-ից մինչև օգոստոսի 20-ը իրականացրել է մշտադիտարկման և վերանայման աշխատանքներ: Վերանայման արդյունքում մշակվել է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների մասնագիտական նոր կրթական ծրագրեր (վերջնարդյունքներ, ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր):

Հաշվի առնելով Ավանդական բժշկության համալսարանի գործունեության ռազմավարության գերակա ուղղությունները և մրցակցային կարողությունների զարգացումը, կրթության որակի ապահովումը, ՄԿԾ-ի վերանայման արդյունավետության ապահովման նպատակով 25.12.2019թ. ՄԿԾ-ի ղեկավարը ՈՒՀ է ներկայացրել զեկուցագիր՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերի բենչմարքինգ կազմակերպելու պլանի վերաբերյալ, որի հիման վրա մշակվել է ԱԲՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի, ուսումնական պլանների և դասավանդման գործընթացների բենչմարքինգի իրագործման պլան-ժամանակացույցը՝ Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի» և «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանի» հետ համատեղ:

16.01.2020թ. մինչև 18.02.2020թ. ժամանակահատվածում իրականացվել է բենչմարքինգի գործընթացը, որի ընթացքում տեղի են ունեցել 5 առցանց հանդիպում Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի» և

ավարտին կազմվել է բենչմարքինգի կատարողական զեկույցի նախագիծ, որը ներկայացվել է ԱԲՀ-ի ՈԱՀ-ի հաստատմանը:

13. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Համալսարանի արտաքին կապերի բաժինը համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որն իր գործունեությունն իրականացնում է Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Համալսարանի Արտաքին կապերի բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը և բաժնի առաջատար մասնագետը՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

Արտաքին կապերի բաժնի հիմնական նպատակն է ապահովել համագործակցությունը տեղական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների, գիտական կենտրոնների հետ, ընդլայնել միջազգային համագործակցությունը, նպաստելով ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, համալսարանի և միջազգային այլ կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանը, համագործակցության զարգացմանը, այլ երկրներից ուսանողների ներգրավման ու երկրների աշխարհագրության մեծացմանը:

1. ԱԲՀ ուսանողների ընդունելություն և հրամանագրում

1.1. Մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի և չափորոշիչների նախապատրաստում:

1.2. ՀՀ ԿԳՄՄՆ կողմից սահմանված ժամկետներում (09.07.2019-20.09.2019) կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՄՄՆ՝ փորձաքննության:

1.3. Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանագրում:

1.4. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:

1.6. Հոկտեմբեր ամսվա վերջում կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունելության արդյունքների հաստատում՝ Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ:

1.7.Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներից է նաև օտարերկրյա

համար բաժինը համագործակցում է ՀՀ Անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ: Կացության քարտերի հետ կապված աշխատանքը կատարվել է 2019թ. սեպտեմբեր-հոկտեմբեր և 2020թ. փետրվար-մարտ ամիսներին՝ ուսանողներին ԲՈՒՀ հրամանագրելուց և ՀՀ ԿԳՄՄՆ հաստատումը ստանալուց հետո: Պատրաստվել են անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթներն ու փաստաթղթերը և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ, ինչպես նաև ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն: 2019թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարվել է արդեն ԱԲՀ ուսանող հանդիսացող ուսանողների ժամանակավոր կացության քարտերի վերաձևակերպում:

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը

2.1. Արտաքին կապերի բաժինը համագործակցում է ուսանողների ներգրավմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպությունների հետ *(Campus International, Study Medicine Europe և այլն)*: Ուսանողների հավաքագրումը կատարվում է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա:

Արտաքին կապերի բաժինը, համաձայն ՀՀ ԿԳՄՄ նախարարության, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից մշակված կարգերի, իրականացնում է ուսանողների ներգրավում համալսարանի կրթական գործընթացին:

2.2.Համաձայն ՀՀ ԿԳՄՄ նախարարության թույլտվության 2019-2020 ուստարվա ուսանողների հավաքագրումն ավարտել է 20.09.2019թ.:

2.3. Արտաքին կապերի բաժինը արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ամբողջ տարվա աշխատանքի ընթացքում:

2.4. Արտաքին կապերի բաժինը աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագիր տրամադրելու հարցում, կատարել է հարցումներ և ստացել պարզաբանումներ:

3. Հաշվետու տարվա ընթացքում Արտաքին բաժնի վարիչը, ըստ անհրաժեշտության, պատրաստել և ներկայացրել է հաշվետու տեղեկանքներ ԱԲՀ ռեկտորին, ՀՀ ԿԳՄՄՆ ստորաբաժանումներ և այլն:

4. Արտաքին կապերի բաժինը բոլոր ստորաբաժանումների հետ միասին մասնակցել է

օտակ ուսանողների և Համալսարանի ստորաբաժանումների միջև: Տարվա ընթացքում Դեկանի, Ուսումնական մասի վարիչի, դասախոսների հետ միասին իրականացվել են հանդիպումներ, ժողովներ ուսանողների հետ, մասնավորապես՝ կարգապահական, ակադեմիական առաջադիմության և այլ հարցերի վերաբերյալ:

Բաժինն աջակցել է օտարերկրյա ուսանողներին ինչպես կրթական, այնպես էլ իրավական, առօրյա և այլ հարցերում՝ ստեղծելով հնարավորինս բարենպաստ պայմաններ ուսանողների համար: Ամբողջ տարվա ընթացքում ակտիվ կապ է պահպանվել ուսանողների և նրանց ծնողների հետ սոցիալական ցանցերում, էլեկտրոնային հաղորդագրության և հեռախոսակապի միջոցով և նրանց հարցերին տրվել է օպերատիվ լուծում: Բաժինը նաև համագործակցել է համալսարանի ստորաբաժանումների հետ՝ ուսանողների հաճախելիության ու առաջադիմության հետ կապված հարցերի վերաբերյալ:

5. Համեմատելով նախորդ տարիների հետ, կարող ենք փաստել, որ ընդլայնվել է օտարերկրյա ուսանողների թիվն ու աշխարհագրությունը: Ստորև ներկայացնենք ուսանողների ընդունելության արդյունքները դիագրամի տեսքով վերջին 3 տարիների ընթացքում:

Գծապատկեր № 1

Ընդունելություն 2017-2018 ուստարի



Գծապատկեր № 2

Ընդունելություն 2018-2019 ուստարի



Գծապատկեր № 3

Ընդունելություն 2019-2020 ուստարի



Կատարվել է 7 տեղափոխվող ուսանողների ընդունելություն գարնանային կիսամյակում (2019-2020 ուս տարի).

- *Բուժական ֆակուլտետ՝ 3 ուսանող (Հորդանանի քաղաքացիներ)*
- *Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 4 ուսանող (Հորդանանի քաղաքացիներ)*

Հավելենք, որ 2019թ. սեպտեմբերին ԱԲՀ-ն ճանաչվել է Հորդանանի Հաշիմյան Թագավորության կրթության և գիտության նախարարության կողմից՝ ընդլայնելով միջազգային համագործակցությունը, և համարել է Հորդանանի նախարարության կողմից ճանաչված արտասահմանյան համալսարանների շարքը:

http://rce.mohe.gov.jo/RecognizedUniversities

Աղյուսակում ներկայացված է օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների ընդհանուր քանակը 2019-2020 ուստարվա սկզբին՝ ըստ երկրների:

N	Երկիր	Քանակ
1.	Հնդկաստան	181
2.	Իրաք	67
3.	Մեծ Բրիտանիա	24
4.	Իրան	9
5.	Եգիպտոս	2
6.	Ֆիլիպիններ	2
7.	Իռլանդիա	3
8.	Շվեդիա	1
9.	Գերմանիա	1
10.	Շրի Լանկա	1
11.	Սիրիա	1
12.	Հորդանան	1
13.	Վրաստան (սփյուռքահայ)	1
Ընդամենը		294

6. 2019թ. դեկտեմբերի 20-ին Արտաքին կապերի բաժնի վարիչը մասնակցեց Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENIC Armenia) կողմից կազմակերպած «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրներ. քաղաքականություն և պրակտիկա», ինչպես նաև «Փախստականների որակավորումների ճանաչում» թեմաներով դասընթացին: Սեմինարը տեղի ունեցավ Երևանի Պլազա բիզնես կենտրոնում (հասցե՝ ք. Երևան Վազգեն Սարգսյան 26/1):

Դասընթացը նախատեսված էր 22 բուհերի միջազգային բաժինների և ընդունելության հարցերով զբաղվող (admission officers) աշխատակիցների համար և դրա նպատակն էր ներկայացնել օտարերկրյա որակավորումների ճանաչման հիմնական սկզբունքները՝ միջազգային և 22 բուհերի փորձի հիման վրա: Դասընթացն անցկացվեց ինտերակտիվ եղանակով՝ տեսական և իրական օրինակների համակցությամբ:

Մասնակիցները դասընթացի ավարտին ստացան վկայական:

7. Պարբերաբար բաժնի կողմից կատարվել է տեղեկատվական նյութերի, հայտարարությունների, փաստաթղթերի պատրաստում և թարգմանություն:

14. ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԲՈՒԿ-ի բժշկական օգնության և սպասարկման տեսակներ

1. բժշկական ընդհանուր պրակտիկա,
2. ստոմատոլոգիական,
3. ատամնատեխնիկական,
4. ռեֆլեքսոթերապևտիկ:

Աշխատողների ընդհանուր քանակը՝ 16-ն է:

Բժիշկներ՝ 12, որից

- ✓ Հոմեոպաթ՝ 1,
- ✓ Ներզատաբան՝ 1,
- ✓ ռեֆլեքսոթերապևտներ՝ 4,
- ✓ Գաստրոէնտերոլոգ՝ 1
- ✓ Ստոմատոլոգ՝ 5:

Միջին բուժանձնակազմ՝ 4, որից՝

Բուժքույր՝ 2,

Սանիտարուհի՝ 1,

Ատամնատեխնիկ՝ 1:

Կենտրոնում իրականացվում է ըստ մասնագիտությունների պրակտիկ ուսումնական գործընթաց և բուժսպասարկում, բացի դրանից նաև գիտական աշխատանքներ՝ ավանդական բժշկության բնագավառում:

- Բարձրացվում է ամբիոնի աշխատակիցների գիտական մակարդակը սեմինար պարապմունքների միջոցով: Զեկուցումներով հանդես են գալիս ամբիոնի աշխատակիցները: Կատարվում է թեմայի քննարկում: Սեմինարն ամփոփվում է ավանդական բժշկության ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի միջոցով:
- Կատարվում է հիվանդների վերլուծություն ուսանողների մասնակցությամբ, մշակվում է բուժման պլան և ինտեգրատիվ բուժում:
- Անց է կացվում բուժական պրոցեդուրաներ, ծանոթացվում է կատարման տեխնիկային և անվտանգության կանոններին:
- «Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնում կատարվում է ասեղ-այրում թերապիան՝ ասեղնաբուժություն

1. այրում թերապիա
2. բազմասեղային ներգրգռություն
3. բուժական մերսում
4. ակուպունկտուրա
5. ասեղ-այրում թերապիան զուգորդվում է ֆիտոթերապիայի և ֆարմակոթերապիայի հետ:

2019թ. «Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնում բուժման կուրս անցել են թվով 231 հիվանդ, իսկ ստոմատոլոգիական կաբինետում՝ 141:

Ստոմատոլոգիական բաժանմունքում բացի հիվանդների սպասարկումից, անցկացվում են ուսումնական գործնական պարապմունքներ և ուսումնաարտադրական պրակտիկաներ, որոնց ընթացքում ուսանողները ձեռք են բերում համապատասխան հմտություններ ու կարողություններ:

Այս տարի օտարերկրյա ուսանողների մի մասը ցանկություն էր հայտել ուսումնաարտադրական պրակտիկան անցկացնել Համալսարանի ԳԲՈՒԿ-ում, որն էլ իրականացրել են մեր դասախոսները:

II կուրս – «Բուժքրոջ օգնական» ուսումնաարտադրական պրակտիկան անցկացվել է ԳԲՈՒԿ-ում:

«Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա» և «Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում» առարկաների շրջանակում ուսումնասիրել են՝

- Ստոմատոլոգիական կաբինետների կահավորում,
- Ստոմատոլոգիական գործիքներ,

- Դեոնտոլոգիան և Էրգոնոմիկան ստոմատոլոգիայում:

IV կուրս – ԳԲՈՒԿ-ում անցկացրել է «Բժիշկ օրթոպեդի օգնական» և «Բժիշկ վիրաբույժի օգնական» պրակտիկաները:

Ուսումնասիրել են ատամների անզգայացում և հեռացում, և ատամների հարադրավորման կլինիկո-լաբորատոր փուլերը:

15. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ԱԲՀ-ի ուսանողական խորհուրդը, համաձայն աշխատանքային պլանի, կազմակերպել և իրականացրել է մի շարք միջոցառումներ:
Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ուսումնական տարեսկզբին, Գիտելիքի, դպրության օրվա, ուսումնական տարվա մեկնարկի հետ կապված, հանդիսավոր հանդիպում է տեղի ունեցել բոլոր կուրսերի ուսանողների հետ:
- Դեկանատի հետ միասին կազմակերպվել են խորհրդակցություններ առաջին կուրսի ուսանողների հետ, որի նպատակն է եղել ուսանողներին ծանոթացնել ինչպես ուսանողական խորհրդի գործունեությանը, այնպես էլ համալսարանի պատմությանը, համալսարանում գործող՝ մասնավորապես ուսանողներին վերաբերող մի շարք իրավական փաստաթղթերի հետ:
- Ավանդական բժշկության համալսարանի և "Campus International" կազմակերպության համագործակցության շրջանակներում, 2019թ. սեպտեմբերի 22-ին Ավանի սպորտ դպրոցում տեղի ունեցավ "Campus International" կրիկետի առաջնությունը: Միջոցառումը կազմակերպվել էր "Campus International"-ի կողմից: Միջոցառմանը մասնակցում էին 6 թիմեր, բաղկացած 66 մասնակիցներից: Մրցաշարին մասնկացում էին ինչպես Ավանդական բժշկության համալսարանի, այնպես էլ այլ բուհերի ուսանողներ:
- Ավանդական բժշկության համալսարանի "Black Vultures" թիմի կազմում հանդես էին գալիս տարբեր կուրսերի ուսանողներ՝ Մոհամմեդ Շիրֆանը, Աբդուլ Հասիբը, Սթիվենսն Օնիշերիթոթթաթիլ Ջեյսոնը, Ռոշան Ռաշիդը, Մուհամմեդ Ռաֆիդի Փառութիկուննանը, Հաշիք Շան:
- Մրցաշարի հաղթող ճանաչվեց "White Sharks" թիմը: ԱԲՀ-ի "Black Vultures" թիմը զբաղեցրեց 2-րդ տեղը: Լավագույն խաղացող ճանաչվեց Նիխիլ Նաիրը՝ "Black Vultures" թիմից և լավագույն գնդակ նետող ճանաչվեց Ֆաիզալ Ֆայազն՝ "White Sharks" թիմից:

- ԱԲՀ ՈՒՄ-ն հոկտեմբերի 5-ին ուսուցչի և ամբողջ կրթական ոլորտում աշխատողների մասնագիտական տոնի առթիվ շնորհավորել է ԱԲՀ-ի դասախոսական ողջ կազմին: Այդ կապակցությամբ պատրաստվել է փոքրիկ միջոցառում և դասախոսներին, ուսումնաուժանդակ անձնակազմին նվիրվել են ծաղիկներ:
- 2019 թվականի հոկտեմբերի 21-ին Ավանդական բժշկության համալսարանի և "Campus International"-ի կողմից ուսանողների շրջանում կազմակերպվեց «Մերձեցման երեկո»: Միջոցառմանը մասնակցում էին Համալսարանի ղեկավարությունն ու աշխատակիցները, "Campus International" կենտրոնի աշխատակիցները, ՀՀ-ում Հնդկաստանի դեսպան Կդ Դեվելն ու դեսպանատան, Հնդկաստանի տնտեսական առնտրի կազմակերպության ներկայացուցիչները, ինչպես նաև համալսարանի տարբեր ազգությունների ուսանողներ:
- Դեկտեմբերի 24-ին տեղի ունեցավ ամանորին նվիրված միջոցառում, որտեղ մասնակցում էին ուսանողները, դասախոսական անձնակազմը:
- Փետրվարի 15-ին Հնդիկ ուսանողների բարեկեցության մշակութային կենտրոնը կազմակերպել էր իր անդրանիկ միջոցառումը: Նշենք որ, կենտրոնի հիմնադիրն է Աշոկ Կրիշնան: Կազմակերպությունը մեկ հարկի տակ էր հավաքել հնդիկ և հայ շնորհաշատ երիտասարդների և պատանիների, ովքեր հանդես եկան պարային և երաժշտական մի շարք համարներով: Մասնակիցների թվում էին նաև Ավանդական բժշկության համալսարանի ուսանողները և ԱԲՀ-ի Որակի ապահովման և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը, Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը և Որակի ապահովման առաջատար մասնագետ Մանուշակ Հովսեփյանը:

16. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒսանողական Գիտության Ընկերությունը (ՈՒԳԸ) իր գործունեությունը հաշվետու տարում իրականացրել է համաձայն տարեկան աշխատանքային պլանի:

Առաջին կուրսի ուսանողները ծանոթացել են ՈՒԳԸ գործունեության և խնդիրների հետ, և նրանց խորհուրդ է տրվել հենց առաջին իսկ կուրսից ընդգրկվել ուսանողական գիտական խմբերում և զբաղվել հետահետազոտական աշխատանքներով:

ՈՒԳԸ-ն աջակցություն է ցուցաբերել ֆակուլտետին և ամբիոններին իրականացնել համապատասխան աշխատանքներ՝ կազմը համալրելու համար:

Նոյեմբերի 28-ին տեղի է ունեցել ՈԻԳԸ խորհրդի նիստ, որտեղ որոշվել է կազմակերպել ինտելեկտուալ խաղ: Մրցույթի անվանումը որոշվել է համացանցում հարցման արդյունքում, որին մասնակցել են համալսարանի 200 ուսանող: Հարցման արդյունքում որոշվել է խաղը անվանել՝ «Crazy doctors»:

2019թ. դեկտեմբերի 13-ին տեղի է ունեցել «Crazy doctors» ներ համալսարանական միջոցառումը, որին մասնակցել է 3 խումբ, յուրաքանչյուր խմբում 5 ուսանող:

Ժյուրիի կազմը՝ Նախագահ՝ պրոռեկտոր, դոցենտ Արայիկ Գյոգալյան,

Քարտուղար՝ IV կուրսի ուսանողուհի Զահրա Շարիֆ

Ժյուրիի անդամներն են՝

1.Ֆակուլտետի դեկան՝ Անահիտ Կարապետյան,

2. Բնագիտական առարկաների ամբիոնի վարիչ՝ Հայարփի Ջավրուշյան,

3. Սոցիալական բժշկության ամբիոնի վարիչ՝ Աննա Սարգսյան,

4. Հումանիտար առարկաների ամբիոնի վարիչ՝ Տաթև Կարապետյան,

5. Բժշկակենսաբանական առարկաների ամբիոնի վարիչ՝ Նաիրա Հունանյան

6. Ուսանողական խորհրդի նախագահ՝ Հայկ Կուլիջանյան

Մրցույթի հաղթող ճանաչվեց՝ «Skull Scavengers» թիմը:

2020թ. գարնանային կիսամյակում հաշվի առնելու աշխարհում նոր Կորոնավիրուսի տարածման պատճառով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պատճառով պլանով նախատեսված ոչ մի միջոցառում չի կազմակերպվել:

Հաշվետու տարվա մայիսի 5-ին կայացել է ՈԻԳԸ խորհրդի օնլայն նիստը, որտեղ հաշվետվությամբ հանդես է եկել ընկերության նախագահ՝ Օֆելյա Նազարյանը:

Ընթացիկ տարվա աշխատանքները հաշվի առնելով տիրող իրավիճակը, հարգելի պատճառով կատարվել է թերի:

17. ԳՐԱԴԱՐԱՆ

Հաշվետու ուսումնական տարում շարունակվել են ԱԲՀ գրադարանի գրքային ֆոնդերի, ինչպես նաև էլեկտրոնային գրքերի շտեմարանի համալրման աշխատանքները:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս նոր գրքերը կոմպլեկտավորվել են, կատարվել է գրքերի գրանցում համապատասխան գրքամատյաններում: ԱԲՀ գրադարանի գրքային ֆոնդերի, ինչպես նաև էլեկտրոնային գրքերի շտեմարանի համալրման աշխատանքները շարունակվել են:

Նոր էլեկտրոնային գրքերը նույնպես տեղակայվել են առարկայի համար ստեղծված համապատասխան թղթապանակներում:

2019-2020 ուսումնական տարում ստեղծվել է նաև գրքամատյանների էլեկտրոնային տարբերակը. գրադարան մուտք գործած յուրաքանչյուր գիրք միևնույն կոդի ներքո իր բոլոր տվյալներով մուտքագրվել է համապատասխան բաժին:

Թե՛ էլեկտրոնային, և թե՛ գրքամատյան գրանցած բոլոր գրքերը ցուցակագրվել են առանձին էլեկտրոնային ցուցակներում:

Հարկ եմ համարում նշել, որ գրադարանում առկա է 1497 միավոր էլեկտրոնային գիրք, որից շուրջ 920-ը ռուսալեզու գրքեր են:

Այս ուսումնական տարում գրքերի ֆոնդը համալրվել է 79-ով՝ կազմելով 4326:

Շարունակվում են նաև համակարգիչներ մուտքագրվել և պարբերաբար թարմացվել դասախոսների կողմից տրամադրված էլեկտրոնային դասախոսությունները:

Պարբերական բնույթ են կրում գրքային ֆոնդում առկա արտաքնապես ոչ հուսալի վիճակում հայտնված գրքերի վերամշակման աշխատանքները:

ԱԲՀ գրադարանը 2019-2020ուս. տարում շարունակել է համագործակցել «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի հետ: «Հանրապետական գիտաբժշկական գրադարանի» կողմից 2020 թվականի փետրվարի 19-ին՝ Գրքի տոնին նվիրված միջոցառման շրջանակներում Ավանդական բժշկության համալսարանը ևս իր մասնակցությունն է ունեցել՝ նվիրաբերելով համալսարանի հրատարակած գրքերի օրինակներ: Բացի այդ, ԱԲՀ-ն «Հանրապետական գիտաբժշկական գրադարանից» նվիրատվության կարգով ընդունել է Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի ամսագրի 2 օրինակ:

2020 թվականի փետրվարի 19-ին ԱԲՀ գրադարանի կազմակերպած ակցիան՝ նվիրված համալսարանին գիրք նվիրաբերելուն՝ անարձագանք չմնաց: Այս կապակցությամբ, գրադարանին նվիրաբերվեցին հայերեն, անգլերեն և ռուսերեն գրքեր: Նվիրատուների նվիրած գրքերը ևս անցկացվել են համապատասխան ցուցակներ և բաժիններ, յուրաքանչյուր նվիրատուի նվիրաբերած գրքերի տվյալների հիման վրա կազմվել է «Նվիրատվության հանձնման և ընդունման ակտ»:

Տարեվերջում ամփոփվել և կազմվել է նաև ուսանողների կողմից գրադարանին չվերադարձրած և այլ գրքերով փոխարինված գրքերի ցուցակը:

Գրադարանը լիովին կատարում է իր առաքելությունը, այն է՝ նպաստել ուսումնական

ծառայություններ, ինչպես նաև համալրել և ընթերցողներին տրամադրել բժշկության ոլորտի թե՛ տպագիր, և թե՛ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանները:

18. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Տնտեսական մասը, համաձայն իր 2019-2020 ուստարավա աշխատանքային պլանի, աշխատակիցների հետ քննարկել է աշխատանքային գործունեության հիմնական խնդիրները և դրանց լուծման եղանակները:

Ներհամալսարանական տնտեսությունը կազմակերպելիս օգտագործվել է տնտեսական մասի աշխատակիցների ներուժը: Հստակեցվել են տնտեսական աշխատակազմի գործառույթները, կարգավորվել է տնտեսական մասի աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը, դրանց նկատմամբ իրականացվել են պարբերական ստուգումներ, գնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

- 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպման համար հատկացված ֆինանսական ռեսուրսներով ձեռք են բերվել՝
  - գրենական պիտույքներ – 274 000 դրամ
  - մատյաններ, ուսանողական տոմսեր և գրքույկներ – 252 500 դրամ
  - լաբորատոր կշեռք -126 000 դրամ
  - ուսումնական մուլյաժներ – 3 788 000 դրամ
  - ստոմատոլոգիական նյութեր - 256 800 դրամ
- Լսարանները՝ և աշխատասենյակները տեխնիկապես հագեցնելու և կահավորելու համար ձեռք է բերվել՝
  - համակարգիչ - 100 000 դրամ
  - սեղան, գրապահարան– 475 000 դրամ
- Համալսարանի համակարգչային ցանցի սպասարկման համար ծախսվել է - 806 400 դրամ:
- Թափուր աշխատատեղերի հայտարարությունների ինտերնետային կայք-էջի համար հատկացվել է 20000 դրամ: Ուսումնական գործընթացի ապահովման նպատակով տպագրվել են փոքր և մեծ մատյաններ, ուսանողական տոմսեր և ստուգման գրքույկներ: